



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԳԻԾԱՆՔԻ ԿԵՐՏՄԱՆ ՄԻՋՈՑ ՀԱԿՈՐ
ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Գրական պատկերավորման միջոցներից թերևս ամենատարածվածը համեմատությունն է: Այն հաճախ հիմք է դառնում գեղարվեստական պատկերի ձևավորման համար: *«Համեմատությունը երկու առարկաների կամ երևույթների համադրությունն է, որը կատարվում է նկարագրությունն ավելի պարզ և վառ դարձնելու համար: Համեմատության հիմքը սովորաբար երկու երևույթների միջև եղած որևէ նմանությունն է, կամ նրանց նկատմամբ հեղինակի մոտեցման ընդհանրությունը, որի շնորհիվ կապ է ստեղծվում նրանց միջև, մեկի օգնությամբ բացահայտվում և բնութագրվում է մյուսը»* [1]: Համեմատության եզրերի ընտրությունը հաճախ արդյունք է ոչ միայն երկու առարկաների միջև եղած նմանության, այլև հեղինակի վերաբերմունքի. *«Համեմատությունը ոչ միայն առարկաների ընդհանուր գծերն է բացահայտում, այլև հեղինակի վերաբերմունքը, նրա զգացմունքային գնահատականը: Այն սովորաբար առաջ է քաշում, ընդգծում է երևույթի բազմազան հատկություններից մեկը, փվյալ դեպքում ամենից էականը»* [1]:

Համեմատությունները հաճախադեպ են ինչպես չափածո, այնպես էլ արձակ ստեղծագործություններում: Արձակում երբեմն հանդիպում են նաև ծավալուն համեմատություններ: Կան բանաստեղծություններ, որոնք ամբողջովին կառուցված են որպես ծավալուն համեմատություն: Համեմատության մի եզրը դառնում է հիմք, որի միջոցով կառուցվում է ամբողջ բանաստեղծությունը (օրինակ՝ Վահան Թեքեյանի «Ես երազիս տիրեցի», Զահրատի «Կարկին» բանաստեղծությունները):

Երգիծական ստեղծագործությունները նույնպես հարուստ են համեմատություններով: Մասնավորապես Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում դրանք կարևոր դեր են խաղում. հաճախ ապահովում են սատիրական ատաղձը՝ դառնալով երգիծանքի կերտման յուրօրինակ միջոց: Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում համեմատություններն ուսումնասիրելը նպատակ ունի բացահայտելու, թե դրանք ինչպես և որքանով են նպաստում երգիծականության արտահայտմանը, քանի որ հեղինակը հաճախ ծաղրում, հեզնում է համեմատությունների միջոցով:

«Ազգային ջոջեր» երկի առաջաբանում արդեն Պարոնյանը կատարում է մի յուրօրինակ համեմատություն: Խոսելով այն մասին, որ ինքը մարդկանց ներկայացնում է այնպես, ինչպես որ են, ուստի ընթերցողին տեղ-տեղ հանդիպած ծանր կետերի պատասխանատուն ինքը չէ՝ Պարոնյանն ավելացնում է. *«Ո՞ր հայելին գաճաճն Աքիլլես կանդրադարձնե, ո՞ր լեռն սուրբը սատրանա կը կրկնե»* [2]: Թեև համեմա-

տությունն այստեղ ուղղակիորեն չի արվում, սակայն հայելու և լեռան արձագանքի՝ իրականությունը ճշգրտորեն վերարտադրելու հատկանիշը դառնում է այն ընդհանուր եզրը, որի միջոցով Պարոնյանը դրանք համեմատության մեջ է դնում իր գրածի հետ՝ դրանով փաստելով իր ասելիքի իրականությանը համապատասխան լինելը:

Երգիծական դիմապատկերներում նույնպես Պարոնյանը երբեմն դիմում է համեմատությունների: Խորեն Գալֆայանի երգիծական դիմապատկերում վերջինիս շատ մականուններ ունենալու հանգամանքը ծաղրելու համար Պարոնյանը գրում է. *«Խորեն եպիսկոպոս ալ, իբրև մարդ, քանի մը փարիներ Նար-Պեյով շափանալե վերջը ուզեց, որ Լուսինյան ալ հորջորջվի, նման այն ավազակին, որ ուրիշի մը գույքը հափշտակելեն ետքը կը փափաքի անոր հայրերն ալ կողոպտելու»* [2]: Հովհաննես Տերոյենցի երգիծական դիմապատկերում նրա արտաքինի մասին Պարոնյանը գրում է. *«Ձայնն այնչափ բարձր էր, որչափ յուր ոճը, այնչափ անուշ, որչափ յուր հողվածները և այնչափ բարակ, որչափ «Երևակին» թուղթը»* [2]: Ձայնը բնութագրելու համար ընտրված ձայն-ոճ, ձայն-հողվածներ համեմատության եզրերը պատահական չեն: Այս համեմատությունների մեջ զգացվում է Պարոնյանի երգիծական մոտեցումը Տերոյենցի ոճի և հողվածների նկատմամբ:

«Համեմատությունները սովորաբար կազմվում են երեք բաղադրիչներից՝ համեմատվող առարկան (համեմատելին), այն առարկան, որի հետ համեմատվում է (համեմատյալ), և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը (տվյալ դեպքում՝ համեմատության հիմքը)» [3]: Սրանից բխում է, որ համեմատություններում սովորաբար համեմատության երկրորդ բաղադրիչը (համեմատյալը) ծառայեցվում է համեմատության առաջին բաղադրիչի (համեմատելիի) դիպուկ, պատկերավոր բնութագրմանը: Սակայն Պարոնյանի համեմատություններում հաճախ համեմատության առաջին բաղադրիչը (համեմատելին) առիթ է դառնում երկրորդ բաղադրիչի (համեմատյալի) մասին որևէ բան ակնարկելու համար: *«Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ»* երկում, օրինակ, Պարոնյանը Միջագյուղ թաղամասը նկարագրելիս նշում է. *«Նախ և առաջ հարկ է գիտնալ, որ այս գյուղը մտնելու համար քանի մը դժվարություններ կան, խոսքս պատկերավոր մարդերու համար է և ո՛չ գողերու համար, իսկ անկե ելնելու համար դժվարություններն ավելի մեծ են»* [4]¹: Այնուհետև ավելացնում է. *«Արևելյան խնդրույն ձևով շինված գյուղ մ' է»* (հտ. 3, էջ 105): Ինչու՞ է Պարոնյանը Միջագյուղ մտնել-ելնելու դժվարությունները նկարագրելու համար հիշատակում արևելյան խնդիրը: Նպատակն այստեղ արևելյան խնդրի միջոցով Միջագյուղ մտնելու-ելնելու դժվարությունները դիպուկ կերպով նկարագրելը չէ բնավ: Միջագյուղի նկարագրությունը հարմար առիթ է շեշտելու արևելյան խնդրի մասին այն իրողությունը, որ այնտեղ մտնելը դժվար է, իսկ այնտեղից դուրս գալն՝ անհնար: Այս համեմատության մեջ Պարոնյանի սոցիալական երգիծանքի մեջ թափանցում է նրա քաղաքական երգիծանքի շերտը:

¹ Այս ժողովածուից հետագա մեջբերումներին կից կնշվեն հատորը և էջը:

«Կամիթներում» ևս Պարոնյանն անդրադառնում է արևելյան խնդրին դարձյալ համեմատության միջոցով. «Այս արևելյան խնդիրը տղայոց խաղած թուրա բիշտիի խաղ դարձավ, ամենքն ալ մեյ մեկ թաշկինակ հափշտակելու կը նային կոր» (հտ. 4, էջ 230): Այստեղ արդեն արևելյան խնդիրը համեմատության առաջին բաղադրիչն է (համեմատելին): Թուրա բիշտիի (լախտի) խաղը արևելյան խնդրի հետ համեմատության մեջ է դրվում ակնարկելու համար, որ տերություններից ամեն մեկը ձգտում է արևելյան խնդրից մի-մի թաշկինակ տանել: Այս դեպքում թաշկինակ ասելով պիտի հասկանանք իրենց շահը: Նույն երկում արևելյան խնդրի մասին Պարոնյանը դարձյալ գրում է. «Ինչպես որ ես իմ բայթոս լայն կ' ուզեմ, դուն քուկինդ նեղ կ' ուզես, ուրիշ մը երկար կ' ուզե, ուրիշ մը կարճ, այնպես ալ կառավարությունք կ' ուզեն, որ այս Արևելյան բայթոն լայն, նեղ, կարճ և միանգամայն երկար ըլլա» (հտ. 4, էջ 289): Միջագյուղի, խաղի, կարվելիք վերարկուի հետ արևելյան խնդիրը համեմատության մեջ դնելով՝ Պարոնյանն ընթերցողի համար այն բացահայտում է տարբեր կողմերից:

Պարոնյանի համեմատությունները բազմազան ու բազմաշերտ են: Նրա համար համեմատության եզր են դառնում առօրյա-կենցաղային իրավիճակներից մինչև քաղաքական իրադարձություններ, անտիկ փիլիսոփաներից մինչև գրական կերպարներ, դիցաբանական պատմություններից մինչև աստվածաշնչյան ավանդություններ: «Նրա երգիծապատումներում, - գրում է Սերգեյ Սարինյանը, - որպես բնագիր մի էական չափով հանդես է գալիս նաև մշակույթը: Այս տեսակետից առանձնահատուկ նշանակություն պետք է հատկացնել հունա-հռոմեական անտիկ մշակույթին (միֆոլոգիա, գրականություն, արվեստ, հոեպորություն, իմաստասիրություն), որ իսկական զինանոց է հանդիսացել Պարոնյանի սրբեղծագործական մտածողությունների համար, թե իբրև ձև և թե որպես աշխարհայացք» [5]: Պարոնյանի արձակի այս առանձնահատկությունն ընթերցողից պահանջում է իմացության որոշակի պաշար: Համեմատությունների որոշակի մասը ծանոթագրված է, դրանք հասկանալու համար ընթերցողը կարիք է ունենում դիմելու երկի ծանոթագրություններին:

Համեմատություններում Պարոնյանը կատարում է սահուն և անսովոր համադրումներ: Այնտեղ, որտեղ կենցաղային իրավիճակի նկարագրություն է, սահուն ձեվով համադրվում է քաղաքականը: Օրինակ՝ իր կենցաղային երգիծապատումներից մեկում «կարգվի՞նք թե չէ» հարցի մասին գրում է. «Ահավասիկ երիտասարդության խնդրոց կարգին մեջ անցած խնդիր մը՝ որ Իզմիրի խնդրույն պես յուր լուծմանը կ' սպասե» (հտ. 6, էջ 213):

Աստվածաշնչյան ավանդություններն ու կերպարները հաճախ են Պարոնյանի համար հիմք դառնում համեմատություններ կատարելու համար: Օրինակ՝ «Հոսիսի ձեռատետրում» Պարոնյանը գրում է. «Ես ալ Թովմաս առաքյալի պես թեպետ և Անգղիո կառավարության կողը մալս չեմ խոթած, այսու ամենայնիվ հիմա կը հավատամ, որ տերություններն Ալպանական միություն կամ երրորդություն մտիկ չունին և որոշած են անպատճառ կարգադրել Հունաստանի, Քարապաղի և Հայաստանի խնդիրները» (հտ. 4, էջ 435):

«Ծիծաղում» նույնպես Պարոնյանը երբեմն դիմում է կրոնական ավանդություններին, օրինակ՝ «Եթե ամեն երևը նայող կիներն Ղովտա կնկա պես աղե արծան կտրեին, թե Պոլսո մեջ աղն շար աժան կը գնեինք և թե գեղարվեստի մասին ավելի առաջադիմություն ըրած կ' ըլլայինք» (հտ. 5, էջ 104): Ղովտի կնոջ հետ համեմատության նպատակը Պոլսո կանանց անընդհատ հետ նայելու սովորությունը ծաղրելն է: Մյուս կողմից ակնարկվում է նաև նրանց գեղեցկության մասին:

«Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկում Կետիկ Փաշայի բնակիչների անմիաբանության մասին ակնարկելու համար Պարոնյանը դարձյալ դիմում է կրոնական ավանդությանը. «Ինչպես որ աշտարակը շինողներն իրարու լեզու չհասկանալուն համար չկրցին աշտարակին շինությունն ավարտել, այնպես ալ ասոնք դեռ չհաջողեցան իրենց վարժարանին շինությունն ավարտել» (հտ. 3, էջ 168):

Պարոնյանը իր երգիծապատումներում շատ հաճախ համեմատության եզր է դարձնում Մոլիերի «Ակամա բժիշկ» կատակերգության համապատասխան կերպարին: Տարբեր առիթներով նա իրեն կամ իր կերպարներին համեմատում է Մոլիերի ակամա բժշկի հետ, օրինակ՝ «Օրագիր հարվածելու մարդ մը կուզե, այդ մարդը ո՛վ ըլլա նե՛ թո՛ղ ըլլա. ասիկա ճիշտ Մոլիերի բժիշկներուն բռնած ընթացքին կը նմանի, անոնք ալ այսպես կըսեին:

- Ինձի հիվանդ մը պետք է բժշկելու, պետք է որ այդ հիվանդը գտնաս և թե որ չգտնաս՝ գիրցած եղիր, որ անոր տեղը քեզ կը բժշկեն» (հտ. 8, էջ 376):

Պարոնյանի համար համեմատության եզր է դառնում անգամ այն ստեղծագործությունը, որի մեջ կատարում է սովյալ համեմատությունը: «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկում Քարթալ թաղի մասին Պարոնյանը գրում է. «Գյուղիս տենդը շար գլխացավ կուտա. երեք օրը անգամ մը կը բռնե, իմ Պտույտիս պես, որ երեք օրը անգամ մը կը հրատարակվի...» (հտ. 3, էջ 236): Երեք օրը մեկ անգամ երևան գալու հատկանիշը դառնում է այն ընդհանուր եզրը, որ համեմատության մեջ է դնում գյուղի տենդն ու «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկը թերևս ակնարկելու համար, որ վերջինս իր երգիծական շեշտերով ոմանց մոտ նույնպես կարող է գլխացավ առաջացնել:

Պարոնյանի համեմատություններում առկա են կրկնվող, կայուն եզրեր: Օրինակ՝ «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկում թաղեցիների բնավորությունը նկարագրելու համար երկու անգամ համեմատության եզր է դառնում թաղի եղանակը: Վերջինիս փոփոխությունները ենթադրում են նաև թաղեցիների բնավորության փոփոխություն. «Գյուղիս կլիման չեզոք է. ո՛չ բարիք կը գործե և ո՛չ չարիք, բնակիչներն ալ իրենց կլիմային պես են» (հտ. 3, էջ 110): «Օդը մեղմ է, թաղեցվույն բնավորությանը պես. իսկ երբ հարավը փչե և ծովն ալեկոծե՝ թաղեցին ալ ծովուն հետ կը կորուսնե յուր հանդարտ բնավորությունը և ալիքներուն պես կը կատաղի» (հտ. 3, էջ 240):

Խաչատուր Մխաթյանի երգիծական դիմապատկերում վերջինիս՝ ոչինչ չանելով մեծ անունի տեր դառնալու ցանկությունը ծաղրելու նպատակով Պարոնյանը նրան համեմատում է Եպիմենիդեսի հետ. «Խաչիկ մարմնով այնքան շուտ կը մեծնար և կաճեր, որ երեք ամսու եղած ժամանակն անբավելի էր մեկ օրորոցի: Կը խաբվեր

մանուկն, կարծելով՝ թե մարդուս անունն ալ անոր մարմինին պես դյուրությամբ կրնա մեծնալ և Եպիմենիդեսի պես հիսունյոթ տարի քնանալով մեծ անունի տեր ըլլալ» [6]: Մեկ այլ տեղ Պարոնյանը Եպիմենիդեսի հետ համեմատությունը օգտագործում է «Մասիսի» անգործությունն ու անսկզբունքայնությունը ծաղրելու համար. «Ավելորդ է ըսել, որ մեր ազգին ամեն անհատին սկզբունքին թիվը իր հասակեն և կամ քիչ կամ շատ քնանալեն կախում ունի. տղաքներն քիչ սկզբունք պիտի ունենային, եթե շարունակ չքնանային և չարթնանային. Մասիսն ալ սկզբունք պիտի ունենար եթե Եպիմենիդեսի պես երկար ապեն չքնանար» (հտ. 6, էջ 47): Միայն այստեղ չէ, որ Պարոնյանը որպես համեմատության եզր ընտրում է «Մասիսը»: Իր ստեղծագործություններում նա տարբեր առիթներով անդրադառնում է «Մասիս» թերթին ծաղրելու համար նրա այս կամ այն հատկանիշը: Օրինակ՝ «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում Մանուկ աղայի կնոջ դեմքը նկարագրելիս Պարոնյանը գրում է. «Բեռնակիրները դուռը զարնելուն պես դուռը բացվեցավ և ներկայացավ իրենց թուխ և երկար դեմքով կին մը, որուն դեմքին վրա ժամանակն այնքան գծեր գծած էր զայն սրբագրելու համար, որքան որ կը գծե Մասիսի խմբագիրն յուր չորս տող մեկ ձեռագրին վրա, որ կամ մեկուն վախճանիլը կիմացունե և կամ ուրիշի մը կարգվիլը» [6]:

Պարոնյանի համար համեմատության առիթ է դառնում նաև բառային համընկնումը: Անունների համընկնումը Պարոնյանը օգտագործում է երկու բան համեմատության մեջ դնելու և մեկի հատկանիշների միջոցով մյուսի հատկանիշները բացահայտելու նպատակով. «Այս գեղին եկեղեցին, որու անուն է սուրբ Թագավոր և ուր սուրբ Աստվածածնա օրը մեծ տոնախմբություն կըլլա՝ ուխտատերի մ' է և ուխտավորներեն շատ դրամ կ' ընդունի: Այս Թագավորն ալ ուրիշ թագավորներու պես բավական հասույթ ունի, բայց զայն գործածելու կերպը չգիտեր, ելմտագետ թաղականներ չունենալուն համար: Եթե ուխտավորներեն առնված դրամներն լավ մատակարարվեին՝ երջանիկ սուրբ Թագավոր մը կ' ունենայինք և յուր վարժարանն ալ միշտ բարեկարգ վիճակի մեջ կը հարատևեր» (հտ. 3, էջ 145):

«Ծիծաղ» այլաբանական ստեղծագործության «Ծիծաղին կարծիքները» բաժինը մեծ մասամբ կառուցված է համեմատությունների միջոցով: Դիպուկ ու երգիծական համեմատությունների միջոցով Պարոնյանը պատկերավոր կերպով բնորոշում է տարբեր երևույթներ, օրինակ՝ «Ապուշի մը գեղեցիկ աղջիկ տալն դիմենիի վրա վարդ պատվաստելուն կը նմանի, չբռներ» (հտ. 5, էջ 112):

Պարոնյանի բոլոր համեմատությունները չեն, որ երգիծական բնույթ ունեն: Կան համեմատություններ, որոնք ունեն աֆորիստիկ բնույթ: Օրինակ՝ «Շատ անգամ դատողությունը կրնա ճշմարտություն մը գտնելու օգնել, բայց չկրնար ճշմարտություն ըլլալ, ինչպես որ լապտեր մը կրնա կորսված ոսկի մը գտնելու օգնել, բայց չկրնար ոսկի ըլլալ» (հտ. 8, էջ 374):

Այսպիսով՝ գրական պատկերավորման միջոցներից համեմատությունը գործուն դեր ունի Հակոբ Պարոնյանի երգիծանքի կերտման գործում: Պարոնյանի համեմատություններում առկա են կրկնվող եզրեր: Դրանք մերթ հանդես են գալիս որպես

համեմատելի, մերթ որպես համեմատյալ: Սա օգնում է բացահայտել երևույթը տարբեր կողմերից: Համեմատությունների միջոցով Պարոնյանը կատարում է բովանդակային ընդհանրացումներ, արտահայտում է քննադատական վերաբերմունք: Պարոնյանը չի կատարում այնպիսի համեմատություններ, որոնք ծառայում են որևէ բանի սուկ պատկերավոր բնութագրմանը: Պարոնյանի համեմատությունները պարունակում են որոշակի ակնարկ կամ քննադատություն որևէ երևույթի նկատմամբ: Երբեմն համեմատության եզրեր են դառնում որևէ երևույթի՝ գրողի կողմից քննադատելի երկու կողմերը, որի արդյունքում մեկի միջոցով բացահայտվում է մյուսը, մեկն էլ առիթ է դառնում մյուսի մասին ակնարկելու համար: Պարոնյանի համեմատությունների մեջ առկա են մշակութային տարբեր շերտեր. համեմատության համար եզր են դառնում աստվածաշնչյան կերպարներ, ավանդություններ, դիցաբանական կերպարներ, անտիկ փիլիսոփաների անուններ, ժամանակի թերթեր ու պարբերականներ: Այն ամենն, ինչ հայտնվել է պարոնյանական երգիծանքի թիրախում, համեմատությունների եզր դառնալով, անընդհատ բացահայտվում է ընթերցողի համար: Որևէ երևույթի նկատմամբ Պարոնյանի հեգնական, քննադատական վերաբերմունքը չի սահմանափակվում միայն մեկ ստեղծագործությամբ: Այն համեմատությունների միջոցով դրսևորվում է տարբեր ստեղծագործություններում՝ անկախ տվյալ ստեղծագործության բնույթից: Համեմատությունների միջոցով կապ է ստեղծվում Պարոնյանի տարբեր ստեղծագործությունների միջև. սոցիալական երգիծանքի մեջ թափանցում է քաղաքական երգիծանքի շերտը, քաղաքական երգիծանքի մեջ՝ սոցիալական, կենցաղային երգիծանքի շերտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Զրբաշյան Է.**, Գրականության տեսություն, Երևան, 1967, էջ 217, 218:
- [2] **Պարոնյան Հ.**, Երկեր, Երևան, 1979, էջ 3, 9, 31:
- [3] **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2006, էջ 341:
- [4] **Պարոնյան Հ.**, Երկերի ժողովածու տասը հատորով, հտ. 3, Երևան, 1964, էջ 105:
- [5] **Սարինյան Ս.**, Պարոնյանի ծիծաղի փիլիսոփայությունը, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, 1993, էջ 41:
- [6] **Պարոնյան Հ.**, Երկեր, Երևան, 1979, էջ 99, 222:

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԳԻԾԱՆՔԻ ԿԵՐՏՄԱՆ ՄԻՋՈՑ ՀԱԿՈՐ
ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Բանալի բառեր` Հակոբ Պարոնյանի արձակ, համեմատելի, համեմատյալ, համեմատության հիմք, երգիծանք, երգիծական մոտեցում:

Աշխատանքում ուսումնասիրված են Հակոբ Պարոնյանի արձակում տեղ գտած համեմատությունները: Դրանց ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու, թե գրական պատկերավորման միջոցներից համեմատությունը որքանով է նպաստում պարոնյանական երգիծանքի կերտմանը: Երգիծական համեմատությունների մեջ Պարոնյանը դիմում է անսովոր համադրումների: Համեմատության եզր ընտրելիս նա հաճախ դիմում է դիցաբանական պատմություններին, աստվածաշնչյան ավանդություններին: Համեմատությունների մեջ երևում է Պարոնյանի երգիծական, քննադատական վերաբերմունքը այս կամ այն երևույթի արատավոր կողմերի նկատմամբ:

Галоян Нарине

СРАВНЕНИЕ КАК СРЕДСТВО СОЗДАНИЯ САТИРЫ В ПРОЗЕ АКОПА ПАРОНЯНА

Ключевые слова: проза Акопа Пароняна, сравнимое, сравниваемое, основа сравнения, сатира, сатирический подход.

В работе исследуются сравнения в прозе Акопа Пароняна. Цель их изучения – раскрыть механизмы того, как сравнение – из всех средств художественной образности – способствует созданию пароняновской сатиры. В сатирических сравнениях А. Паронян использует необычные сопоставления. При выборе аспектов сравнения он часто обращается к мифологическим историям, библейским традициям. В сравнениях видно сатирическое и критическое отношение А. Пароняна к тем или иным порочным явлениям действительности.

COMPARISON AS MEANS OF EXPRESSING SATIRE IN HAKOB PARONYAN'S PROSE

Key words: Hakob Paroyan's prose, satire, comparable, comparative, comparative basis, satirical approach.

In this article, we have studied the comparison in Hakob Payoyan's prose. The study is aimed at discovering how comparisons of literary imagery can contribute to the creation of Paronian's satire. In satirical comparisons, Paronyan applies unusual ones. While making a comparison, he often addresses mythological stories, Bible traditions. These comparisons show Paronyan's satirical and critical attitude towards the vicious sides of the reality.